

С. А. Минасян

Резюме

В данной статье тема раскрывается в типологическом аспекте.

Teaching grammatical category of number of pronouns.

S.A. Minasyan

Summary

In the given article the theme is considered by the typological aspect.

ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1(25) 2012

ՀՏԴ 809.1981.1

Ժամանակակից հայոց լեզու

ԵՐԲ ՀԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԲԱՌԻ ՇԱՐԱԽՅՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հ.Ս. Ղազարյան

Բարդ նախադասության ստորադասական հարաբերությամբ կապակցված բաղադրիչ նախադասությունների միջև եղած շարահյուսական կախվածության արտահայտման համար լեզվում գործառնում են հատուկ միջոցներ՝ ա) նշույթավոր կամ գործածական և բ) աննշույթ կամ շարահարական:

Նշույթավոր կապակցության մեջ իբրև նշույթ գործածվում են ստորադասական շաղկապներն ու հարաբերական բառերը: Իրենց դերով սրանք որակապես տարբերվում են: Շաղկապները, չունենալով նյութական իմաստ, կատարում են միայն կապակցական դեր, իսկ հարաբերականները, ունենալով նյութական իմաստ և արտահայտելով ընդհանուր, չտարբերակված առարկաներ ու հատկանիշներ, ունենում են երկակի գործառնությւն: Կապակցում են բարդ նախադասության բաղադրիչներ և միաժամանակ դառնում կախյալ նախադասության լիարժեք անդամներ:

Թե՛ ստորադասական շաղկապները, և թե՛ հարաբերական բառերը, իրենց գործառնությային արժեքով պայմանավորված, լինում են՝ ա) մենագործառնությային բ) բազմագործառնությային:

I խմբի մեջ մտնող բառերը բնորոշվում են շարահյուսական իմաստատարբերակիչ արժեքով, նրանց ընտրությունն արդեն իսկ կանխորոշում է կախյալ նախադասության լրացական բնույթը: Երկրորդ խմբի մեջ մտնող բառերը բնորոշվում են բազմագործառնությային արժեքով. նրանցով կապակցվում են շարահյուսական այլևայլ հարաբերություններ արտահայտող կախյալ նախադասություններ:

Վերջին իմաստով սույն հոդվածի սահմաններում մեզ հետաքրքրում է *եղբ* հարաբերական բառը: Կապակցման դերով այն գրաբարում գործածական չէր, նրա փոխարեն գործածվում էին *իբրև* և *յորժամ* շաղկապները: Միջին հայերենում ժամանակի շարահյուսական հարաբերություններ արտահայտելու համար հանդես են գալիս մի շարք նոր շաղկապներ ու հարաբերական բառեր՝ *եղբ*, *եղբ որ*, *քանի*, *քանի որ*, *մինչդեռ*, *հանց*, *հանց որ*, *մինչ*, *ինչ- որ*, *ինչոր* և այլն: *Իբրև* և *յորժամ* բառերով կապակցումը հանդիպում է միայն գրաբարատիպ բնագրերում [1,222]: Նշված շաղկապների ու հարաբերականների մեծ մասը անցել է ժամանակակից հայերենին: Նրանց մեջ իր գործառնությամբ և գործածականության հաճախականությամբ առանձնանում է *եղբ* բազմագործառնությային արժեքով բնորոշվող հարաբերական բառը: Ժամանակակից հայերենում նրա բազմագործառնությային լինելը

բացատրվում է նրանով, որ *Երբ*-ով կապակցվող կախյալ նախադասությունները լրացնում են գլխավոր նախադասության ինչպես բայական, այնպես էլ անվանական անդամներին: Լրացյալի նկատմամբ այն ունենում է տարբեր հարաբերություններ և բնականաբար կատարում շարահյուսական տարբեր գործառնություններ:

Երբ հարաբերականով հիմնականում կապակցվում են ժամանակի պարագա կախյալ նախադասությունները, որոնք վերառված կերպով նշում են գերադաս բաղադրիչի լրացյալի արտահայտած գործողության կամ եղելության կատարման ժամանակը [2,332]: Կախյալ նախադասությունները գերադասի նկատմամբ ունենում են տարբեր հարաբերություններ՝ համաժամանակության և տարաժամանակության: Համաժամանակության դեպքում գլխավոր և կախյալ նախադասությունների ժամանակները լիովին կամ մասնակիորեն համընկնում են: Օրինակ՝ **Երբ նա երգում է այդ երգը, նա հիշում եմ իմ մանկությունը:**

Տարաժամանակության դեպքում գերադաս և կախյալ նախադասությունների արտահայտած գործողությունների ու եղելությունների իրական ժամանակները չեն հանդիպում, այլ հաջորդում կամ նախորդում են իրար: Օրինակ՝ **Երբ մեր զինվորները անցան հարձակման, թշնամին մատնվեց խուճապի:**

Երբ հարաբերականով կապակցվում են նաև ժամանակի իմաստ ունեցող՝

1. Ենթակա կախյալ նախադասությունները: Օրինակ՝ **Ուղղակի տեսն էր, երբ նա խոսում էր ամբարտաժան ռճով: Ուրիշ էր, երբ սկսեց խոսել հայ ժողովրդի պատմության մասին:**

2. ստորոգելի կախյալ նախադասությունները, որոնց գլխավոր նախադասության մեջ սովորաբար համապատասխանում է ժամանակի կապով և դերանունով արտահայտված ձևական ստորոգելի հարաբերյալ: Նման դեպքերում կախյալ նախադասությունը փոխարինում է գերադաս նախադասության կազմում եղած կապվող բառին միայն: Դրա պատճառն այն է, որ գերադաս նախադասության մեջ արտահայտված է լինում այն կապը, որով ձևավորվում է նաև տվյալ իմաստը, այդ կապը պահպանվում է և բարդ նախադասության պարզ փոխակերպի մեջ: Օրինակ՝ **Դա այն ժամանակ էր, երբ բոլորը հավաքվել էին: Դա բոլորի հավաքվելու ժամանակ էր:**

3. որոշիչ կախյալ նախադասությունները, որոնք գերադաս նախադասության գոյականական անդամը բնորոշում են այնպիսի գործողությամբ կամ եղելությամբ, որը կատարվում է լրացյալի ցույց տված ժամանակում, դրանից առաջ կամ հետո: Այդպիսի որոշիչ կախյալ նախադասությունները լրացնում են ժամանակի անուններին կամ այնպիսի բառերի, որոնց մեջ կա կամ կարող է ենթադրվել ժամանակի իմաստ (միջոցառում, դաս, ժողով, պարապմունք, ուղևորություն, զբոսանք, երթևեկություն, ընթացք, ճաշկերույթ...) [3, 154]:

Օրինակ՝ **Ես երանությամբ եմ հիշում այն օրերը, երբ ապրում էի տառիս մոտ: Նրանք ցավով են հիշում այն հանդիպումը, երբ իրար այլևս չեսելու ոչինչ չունեին:**

Առաջին նախադասության մեջ լրացյալը ժամանակի անունն է (օր), իսկ երկրորդի մեջ՝ այնպիսի գոյական (հանդիպում), որի իմաստը առնչվում է ժամանակի հետ: *Երբ* հարաբերականով կապակցվող կախյալ նախադասություններին գերադասի մեջ սովորաբար համապատասխանում են *այն, այնպիսի* հարաբերյալները: Երբեմն կարող է գործածվել *այս* ցուցական դերանունը *հենց* եղանակավորող բառի կամ *նույն* ցուցական դերանվան հետ, որով ընդգծվում է գլխավոր և կախյալ նախադասությունների գործողությունների միաժամանակ կատարվելը: Օրինակ՝ **Մի՞թե նա հենց այս օրը պիտի գնար, հենց նույն այս օրը, երբ մայրը ևս պատրաստվում էր գնալու:**

Երբ հարաբերականով կախյալ նախադասությունը կարող է լրացնել գերադասին նաև դրություն, վիճակ ցույց տվող որոշյալի առկայությամբ: Այս դեպքում վերջինս բնորոշվում է միաժամանակ հանդես եկած որևէ երևույթ նկարագրելու միջոցով: Օրինակ՝ **Այնպիսի դրությունը, երբ բոլորն իրար նկատմամբ դարձել են բարյացակամ, կարող է օգնել հարցի լուծմանը:**

4. մասնավորող պարագայական բացահայտիչ կախյալ նախադասություններ, որոնք լրացնում են գլխավոր նախադասության ժամանակի պարագային և հիմնականում ունենում միջադաս շարահյուսություն: Օրինակ՝ **Իրիկնադեմին, երբ անցնում էինք սարերը, մի անգամ էլ երևաց գյուղը:**

Նման տիպի նախադասություններում գլխավորի մեջ հարաբերյալ չի լինում: Հակառակ դեպքում, երբ լրացյալն ունենում է որոշիչ հարաբերյալ, կախյալ նախադասությունը բնույթով լինում է որոշիչ: Հմմտ.

1. **Այն օրից, երբ նա եկավ, նա հանգիստս կորցրի:** (որոշիչ)

2. Շաբաթ օրից, երբ նա եկավ, եւ հանգիստս կորցրի: (բացահայտիչ)

5. ուղիղ խնդիր կախյալ նախադասություններ, երբ ունենում են ժամանակի իմաստային երանգ, լրացնում գերադաս նախադասության ներգործական սեռի բայով ձևավորված անդամին և պատասխանում ի՞նչ հարցին: Օրինակ՝ **Նա սիրում էր, երբ բոլորը գիտակցում էին իրենց անելիքները: Ես ատում եմ, երբ ինձ հետապնդում են:**

6. երբեմն պատճառի պարագա կախյալ նախադասությունը, երբ պատճառային փոխհարաբերությունների հետ միասին շեշտվում է նաև գերադաս և ստորադաս նախադասությունների միջև եղած ժամանակային կապը: Այսպիսի նախադասություններ հիմնականում հանդիպում են ժողովրդախոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ: Օրինակ՝ **Ինչի՞ս է պետք այդ փայտը, երբ առանց դրա էլ կարող եմ քայլել:**

7. պայմանի պարագա կախյալ նախադասությունները, որոնց դեպքում գերադաս նախադասության մեջ առկա են լինում *այն ժամանակ, այն դեպքում* հարաբերյալի դեր կատարող կապակցությունները: Դրանք կախյալ նախադասությանը հաղորդում են ժամանակի իմաստային երանգ, ընդգծում բաղադրիչ նախադասությունների միջև եղած իմաստային կապը, այն, որ գերադաս նախադասության գործողությունը կարող է կատարվել միայն կախյալ նախադասության գործողության կատարումից հետո: Հարաբերյալների բացակայության դեպքում կապակցումը պետք է կատարվի *եթե* շաղկապով [4, 147]: Օրինակ՝ **Կներնամ քեզ այն դեպքում, երբ ուղղես սխալներդ և նվիրվես հայրենիքիդ: Կներնամ քեզ, եթե ուղղես սխալներդ և նվիրվես հայրենիքիդ:**

Այսպիսով՝ *երբ* հարաբերական բառը բնութագրվում է որպես բազմագործառնության յանք ունեցող կապակցական միավոր: Նրանով կապակցվող կախյալ նախադասությունները կա՛մ նշում են գերադաս նախադասության լրացյալի արտահայտած գործողության ժամանակը, կա՛մ ունենալով ժամանակի իմաստային երանգ՝ լրացյալի նկատմամբ գտնվում են տարբեր հարաբերությունների մեջ և կատարում շարահյուսական տարբեր գործառնություններ:

Գրականություն

1. Հովսեփյան Լ., Կարապետյան Լ., Վարդապետյան Պ., Ակնարկներ միջին գրական հայերենի հ.բ, Եր., 1975:
2. Պապոյան Հ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003:
3. Աբրահամյան Ս., Հայոց լեզու. Շարահյուսություն, Եր., 2004:
4. Բեդիրյան Ս., Հայ լեզուն և մեր խոսքը, Եր., 1998:

Синтаксические функции относительного местоимения “когда”.

А.С.Газарян

Резюме

В статье рассматривается связующая роль союзного слова *когда* в выражении синтаксической зависимости между компонентами сложноподчиненного предложения. Отмечается, что помимо связи придаточного обстоятельства времени с главным, с его помощью связываются также определительные, изъяснительные, условные и причинные придаточные предложения, выражая временные смысловые оттенки.

The syntactical functions of the relative pronoun “when”.

H.S.Ghazaryan

Summary

In this article the binding role of the connective word “when” expressing syntactic dependence between compound sentence components is considered. It is noted that besides the connection of the adverbial clause of time with the principal clause, it also connects attributive, object, conditional and causal subordinate clauses expressing semantic shades of time.

ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵԼԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1(25) 2012

ՀՏԴ 800.87 (479.249)

Հայոց լեզու, բարբառագիտություն

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՕՐԻՆԱԶԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ
(ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ա.Յու.Սարգսյան

Լեզուն մտածողության ձև է և մտածողության նյութական դրսևորման միջոց: Եվ քանի որ բարբառը լեզվի տարածական դրսևորումն է, ուստի այն դառնում է տվյալ տարածքի հանրության մտածողության դրսևորման միջոցը: Բարբառային մտածողությունը այդ առումով ոչ միայն բանահյուսական լեզվական արտաքին միջոցը, այլև նրա ներքին պահանջն ու էությունն է: Բանահյուսական նյութերի գրառման ժամանակ խիստ անհրաժեշտ է բարբառային օրինաչափությունների պահպանումը, ինչը արտահայտում է ոչ միայն ազգագրական տվյալ շրջանի խոսվածքի առանձնահատկություններն, այլև այդ տարածքի հայերի լեզվամտածողությունը, նրանց նիստն ու կացը, կենսափոխակերպությունը: Այլապես բանահյուսական նյութը զրկվում է իր համ ու հոտից՝ ներկայանալով որպես բովանդակային միավոր:

Դժբախտաբար, պետք է ասել, որ հայ բանահյուսության մեջ հաճախ է անտեսվել այդ հանգամանքը՝ բանահյուսական բազմաթիվ ժողովածուներ տվյալ բարբառի ուսումնասիրման համար դարձնելով ոչ հուսալի աղբյուր: Հարցը մեկնաբանելու համար ներկայացնենք Ղարաբաղի բանահյուսական ժողովածուների դրվածքը:

Սկսած 1960-ական թվականների սկզբից, երբ Բահաթյան եղբայրները Շուշու և հարևան գյուղերի բնակիչներից հայ իրականության մեջ առաջինը գրառեցին հայկական հեքիաթներ, մինչև օրս Ղարաբաղի տարբեր բնակավայրերից բանահյուսական նյութեր են հավաքագրել ու հրատարակել մի շարք բանահավաքներ՝ իրենց հայրենաանվեր գործունեությամբ փրկելով դրանք կորստյան վտանգից: Հիշատակելի են Մակար Բարխուդարյանի «Պղը Պուղի» (1883), «Բարոյական առածներ» (1898), Սարգիս Իսրայելյանի «Ղարաբաղի գվարձախոս «Պղը Պուղին»» (1956), Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» (1971), Միքայել Առաքելյանի և Ռոբերտ Ղահրամանյանի «Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից» (1978), Ալվարդ Ղազիյանի «Արցախ» (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15, 1983), Լևոն Հարությունյանի «Նշխարներ Արցախյան բանահյուսության» (I մաս, 1991, II մաս, 2004, III մաս, 2007) և մի շարք այլ ժողովածուներ: Առանձնակի արժեք են ներկայացնում. «Հայ ժողովրդական հեքիաթներ» բազմահատորյակի V, VI, VII հատորները, որտեղ ընդգրկված են Մ.Գրիգորյան-Սպանդարյանի (V հ.), Միքայել